

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԱԶԳԵՐՆԻՍ ԿՑԱՌԱՋԱԴԻՄԴ՝ ԿՈՐ

(Նամակ Խմբագրութեան)

Կարդացինք Լէօ-ի «Ստեփաննոս Նաղարեանց» Նոր հրատարակութիւնը,

Կարդացինք և, չմտնելով մանրամասնութիւնների մէջ, կուզէինք մի քանի խօսք ասել մեր ստացած տպաւորութիւնների և մեր մէջ զարթեցրած խոհների մասին.

Գրքի թէ նաշխուն շապիկը և սրա ծղբառան նկարները, թէ համարձակ լեզուն ու ճռճան բառերը, թէ ուժգին շեշտերն ու ձիգ բացականչութիւնները կրումեն «առաջադիմական» հանդիսանալու բոլոր պայմանները.

Յալոնի է, որ Լէօն, ինչպէս քանից շեշտել է «Մշակո-ի մէջ իր «Կիրակինօրեալ» թէ հանապազօրեալ զրոյցներում ու լոգուածներում, միշտ գրում է «Նոր ալբուգենից» սկսող ընթերցողների համար. իր նոր լուս հանած զրքի մէջ էլ միակ շեշտառը մեղադրանքը, որ բացարձակապէս տալիս է Ստեփաննոս Նաղարեանցին, հէնց արն է, որ նա, Նաղարեանցը իր «Հիւախսափալլը» խմբագրելիս չէ հետևել Լէօի անզուգական օրինակին. ամսինքն՝ «Նոր ալբուգենից» սկսող ընթերցողների ճաշակին ու մտքին չէ լարմարեցրել իր «Հիւախսափալլը» բովանդակութիւնը, Ուրիշ խօսքերով՝ Նաղարեանցը «Հիւախսափալլը» հրատարակելուց առաջ չէ եղել աշակերտած մեր խորոշին:

Լէօն իբրև հասարակ ժողովրդի մարդ շատ լաւ զիտէ, որ «Նոր ալբուգենից» սկսող ընթերցողների առաջ կամ չպէտք է բնաւ պակասաւոր, սխալական կողմեր ցուց տալ արն գործիչների, որոնց ուզում են պաշտելի դարձնել արդ սկսնակների, արդ հասարակների աչքում, կամ, եթէ ալբուխներ էլ պատահեն, պէտք է սրբած, մաքրած, արգարացրած ներկապացներ. Գիտէ և այն, որ արդպիսիների առաջ մեծ, գիտնական հեղինակ հանդիսանալու համար պէտք է մեծերից բռնացնել, բարձրից սկսել, առանց կանգ առնելու՝ աջ ու ձախ հարուա-

ծել իր հերոսին դովելով չբաւականանալու դէպքում՝ նրա հակառակորդներին լաւ կշտապինդ ու նորալուր լիշոցներով փառաւոր զարդարել:

Մեր առաջադիմական գործի ալժմեան կապալառուները ալս ամենը շատ լաւ են սերտել և շատ աելի լաւ էլ գիտեն ալդ ընթացքում զափնիներ վաստակել Արապիսով մի անդամից թէ իրենց ուղած մարդկանց են ժողովրդականացնում և թէ, որ ամենից զլասաւորն է, իրենք են ժողովրդականանում, մնանում:

Ասապէս է ընթացել և Լէօն, արդեան առաջադիմական-ների հարապարակում «քանիբուն» հրատարակուած ալդ հա-պարակիագիրը:

Օրինակ Նազարեանցի՝ «տիարների հետ տկար լինել լանուն աղդի և նրան օդնելու տենչանքի» սկզբունքը, նրա՝ Նազարեանցի անտիպ աշխատութիւնները լրս հանե-լուն նապաստող մեկնասներին ու բաժանորդներին զո-վել զովարանելու սովորութիւնը Լէօն ոչ միայն, իր խօսքե-րով ասենք, «աիրա չի անում զասապարտելու», ալլ և՝ «հաշտ-ւում է այն բանի հետ, որ արդասի խօսքեր արտասանողը Ստեփաննոս Նազարեանցի շրթունքներն են»։ Որպիսի մե-դաշտ խօսքեր, քնչքոյ վերաբերմունք «Նազարեանցի շրթունք-ները».. Նև Լէօն ոչ միայն ինքն է հաշտում, ալլ և հաշտեց-նում է իր ընթերցողներին, բացականչելով, «միթէ հէնց ալժմ էլ զոլութիւն չունի ալդ մի և նոյն դրութիւնը» (Ստ. Նազ. հատ. Ա. եր. 125—127)։

Մի ալլ օրինակ. Նազարեանցն իր մի անտիպ աշխատու-թիւնը նուիրում է Յովհաննէս եպիսկոպոս Շահսաթունեան-ցին։ Մի քանի տարուց իտու նոյն աշխատութիւնը նուիրում է Լազարեան տոհմի վազամեռիկ մանուկ Յովհաննէսի լիշա-տակին։ Արիստոակէս եպիսկոպոս Սեղրակեան իր լրս հանած «Յովհ. եպս. Շահսաթունեանցի կինսագրութեան» մէջ Նա-զարեանցի ալդ վարմունքը «աններելի» է համարում այն պատ-ճառով, որ Նազարեանցը՝ «100—150 բուրյ ստանալու հա-մար մոռանում է այն բարեկամի անունը որին չորս տարի առաջ ընծալած էր աշխատութիւնը»։ Լէօն մէջ բերելով ալս հանդամանքը, եղրակացնում է. «Նազարեանցը ուրեմն մե-զարդում է մի գծուծ շահասիրութեան համար» և աշխատելով ջրել Սեղրակեանի մեղադրանքը ասում է, «այն ժամանակ պէտք է ընդունենք, որ զանազան կողմերից թափւող ցա-ւակցութիւններն էլ գրել են միայն այնպիսի մարդիկ, որոնք Լազարեաններից 100—150 ր. էին ստացել» («Ստ. Նազ. Բ. հատ. եր. 392»)։

Սքանչելի վաստաբանութիւն։

Նև աւապէս Ստեփաննաս Նազարեանցի գործած ուրիշ սխալ քալիկը կամ արտապատած գաղափարները Լէօն արդա-րացնում է է որ նրա ստացած կրթութեամբ, է որ ունեցած

աշխարհահավեցողութեամբ, և որ կացութեան պալմաններով և ալին, բաց երբ խնդիրը վերաբերումէ նազարեանցի հակառակորդներին՝ լէօն լիշոյներ է շաղ տավլ ամեն առատութեամբ. չէ խնալում մինչեւ անգամ իր՝ լէօի խօսքերով՝ «Ներոս, եռանդուն, խելօք, հեռատես»¹⁾, անուանած հողմորականին, ներսէս Աշտարակեցուն նախապատճեն ապա շար ու ած հանդիսացնելու ան բանի համար, որ նազարեանցին պաշտօնի չկանչեց, հաստ լինծծուց. Ափ խնդիրը, որ հասնում է լշջմիածնի, հողեւորականութեանը, թէկուզ նրա հերոս, հեռատես ներկայացուցին, պէտք է հաճուել. Սա մեր օրերում արդէն առաջադիմական համարուելու անհրաժեշտ նշան ու պահանջ լինելու հետ, «նոր ալբուբենից» սկսող հասարակների ծափահարութիւններին արժանանալու աներկրապելի պարմանն է զարձել:

Ընդհանուր առմամբ լէօն իր «Ատեփաննոս նազարեանցով» մի առանձին նորութիւն չի տալիս ընթերցողներին, քան այն, որ տուել է, օրինակ, Սմբատ Շահաղիպետան իր «Հրապարակախօս ձախով» ղեռ սրանից 21' տարի առաջ՝ ծշմարիտ է, լէօի լեզուն անհամենաա աւելի հասկանալի, նիւթի զասաւորութիւնը աւելի մատչելի է, քան Շահաղիպետը, բաց սրա փոխանակ՝ «Հրապարակախօս ձախով» մոտածողութիւններն աւելի խոր են, արձակած վճիռները անկեղծ հաւատի, զիտութեան և իւրաց բած համոզ մուռ քների արդիւնք են, այն ինչ լէօինը անզիր արածի, ամենօրեալ դորձածութիւնից արդէն մաշուածի, հակառակորդներին առանձին, հաճուքով հարնուղի, մեծամորէն քամահարողի տպաւորութիւններ են թողնում. Ազնպէս որ տուանձին հատորներով լոյս հանած զրքերի մէջ էլ լէօն մնացել է նոյն ֆրազիօրը, կանչւոտողը, ինչպէս նա կալ ու կալ «Մշակի» քննազատականներում, բանասիրականներում ու կիրակնօրեալ զրոցներում.

Լէօի այս առանձնակատով զծերը ղեռ արնպէս աչքի չեն ընկնում ալժմեան մեծ մասսամբ անբովանդակ «Մշակի» մէջ, նամանաւանդ «Արձինի» նման օրինակելի խելառ մելառ լոգուածների շարքում, ինչպէս սուր կերպով երկում են» Ստեփաննոս նազարեանց» երկնաւտոր աշխատութեան մէջ, «Նազարեանցի ամեն մի ասացուածքը, հակառակորդներին ուղղած զարձուածները, կամ ազգային ու զիտական խնդիրների վերաբրմամբ արած խորհրդածութիւնները, դիտողութիւնները կրում են լրջութիւն, ծանրութիւն, խորին ուսումնասիրութիւն, հիմնական ծանօթութիւն, ազդում են հասկացողութեանդ, սրաիդ, իսկ լէօի դատողութիւնները, տեղի անտեղի շռալած գովեստներն ու հաճուանքները, արձակած դատավագիւնները մի՛ և նոյն զրքերում, նազարեանցի խօսքերին ու մտքերին կողէկող՝ երեսում են ջրալի և անհամ:

1) Ստ. Նազ. I եր. 118—9.

Արդէն մեր ազգի առաջադիմական ընթացքի տարաբաղ-
տութիւնը բնորոշւում է այն հանգամանքով, որ նոր դրա-
կանութեան, նոր շարժման սկիզբ գնողը եղել են Խաչատուր
Արովեանցի կամ Ստեփաննոս Նազարեանցի նման եւրոպա-
կան դիտութեան աւազանի մէջ վերածնուած, իսկապէս բա-
նիբուն անձինք, իսկ մի և նորն գործի առաջ տանողները
քսանիրորդ դարի անհամեմատ առամել լուսաւոր ու դիտու-
թեամբ ճոխացած մեր միջոցներում են ալսօր Ալէքսանդր Քա-
լանթար, Լէօ, որոնք ի պաշտօնէ խօսում են ու գրում եւ-
րոպականութիւնից ու Եւրոպալից առանց հուն առած
լինելու, Եւ ի լրումն ալս կատակերգութեան ալսօր Քալան-
թար ու Լէօ նորնպէս «բանիրուն» են հոչակում ու վկարում
իրենց տանը՝ «Մշակի» էջերում իրենց գինակցի՝ Ստ. Մալ-
խասեանցի ձեռքով¹⁾. Բնչ անձինք, որ համանման վարժուն-
քը Լէօ-թէկուղ համեստօրէն խօսելով «շատ անպաշած ու
անտեղի» է համարում Նազարեանցի ու Նալբանդեանցի վե-
րաբրիմամբ²⁾.

Լէօն ունի լաւ զրելու շնորհ կարդացածները միտք պա-
հելու սուր իշշողութիւն, ունի աշխատասիրութիւն բաց ակտ
ամենը շատ քիչ են այնպիսի լանդուգն ձեռնարկութեան հա-
մար, ինչպիսին որ է առաջադիմութեան էվոլիւցիալի պատ-
մութիւն զրելը, զրական շարժումներ առաջ բերող խոշոր
դործիչների քալիք քննազատելը, նոր զաղափարների ժողո-
վրդականացնելը, վիճող բանակների, տիրող վարդապետու-
թիւնների ու շարժումների ծագումն, ընթացքը պատճառների
լուսաբանելը. Սորա համար անհրաժեշտ է սիստեմատիքաբար
ստացած ուսումն, եւրոպական զրականութեան հետ լաւ ծանօ-
թութիւն բուն ազգիւրների ուսումնասիրութեամբ, այլ ոչ
խօսով քրիստոնատեաների, սեղմ զրական պատմութիւնների
ու հանրապիտական բառզրերի միջով. Անհրաժեշտ է գիտու-
թեան խոչոր պաշար:

Լէօն անվերջ զրում է «Հալոց զրականութիւնը» լուս է
ընծալել «Ստեփաննոս Նազարեանցը» (լուս է ընծալելու «Գրի-
գոր Արծրունի») և ալդ ամենը այնպիսի ծրագով ու լուսաբա-
նիւթիւններով, որով ձգուում է հանդէս հանել մեր քաղաքա-
կանութեան, մեր լառաջադիմութեան դործի էվոլիւցիան:
Բաց ոչ «նոր ալբուրենից» սկսող հալի ընթերցողների խելա-
պատակը կարող է տանել ալդ նիւթի պահանջող ծաւալն ու
խմաստը, որքան էլ «Հալոց մեր որ իրկինս ես» դարձնի «Մեր
Հալոց որ երկնքումն ես, և ոչ էլ տասը տարի շարունակ «աբ-
րուքեն» դասաւանգող վարժապետը պիտի իր աշակերտների
տղիտութիւնից ալնքան մեծամտի, նրանց զովքերից ալնքան
շանակ, որ իր ուժերն ու կարողութիւնը ալդ աստիճան մո-
ռանալի:

Եթէ մեր լառաջադիմական զործի ալսօրուալ խալտառակ
կացութիւնը պատկելու համար չար բաղդը Լէօներին ընտրել է
ԼՈՒՄԱՑ

վերին դատաւոր, բոլոր սրտից կցանկալինք դոցա զգաստանաւ, զգուշանաւ, խմանաւ ու պահել իրեն չնորմների և զիտութեան սահմաներում, որով շատ աւելի համակրելի ու պատուաւոր կինեն, քան թէ արժմ, որ թամքել են իրենց փալտէ ձին և ուղարկ են թռչել Օլիմպոսի դադաթը՝ Արամաղ-դի զիսից ամեն խմաստութիւնը խլելու.

Եւ մեր լատաջաղիմական գործի ալս օրինակ լետադարձ վիճակի մէջ լինելու, իրերի ալսքան ողբերգական թէ կառակերգական դասաւորութեան չնորհիւն է, որ ինչպէս խոստովանում է Լէօ ալտօր՝ «հալ մամուլի ընթերցողը զարդացած դասակարգը չէ» ալլ «ալբորքնից մկանու հասարակ ժողովուրդը»:

Արմա ալտագէս չէր կարող լինել, քանի որ «Արձադանքը» դադարեց, քանի որ Գրիգոր Արծրունու աթոռուն անսարժանապէս ըսղմել Աւելքաննոր Քալանթարներ, քանի որ հասարակական խնդիրներ լարուցանող, մշակող սրանց ուղղութիւն տուող, մեր լուսաւորութեան էվոլյուցիան գրող կիանդիսանան «Հուշուար-Ղալի գիտութեան աւազանում մկրտուած Լէօնէր»:

Ավմենան իրենք իրենց առաջադիմական անուռւանողների ախն հրապարակական խոստովանութիւնը թէ զարդացած հալ դասակարգ չէ կարդում իրենց զրածները, թէ իրենց թերթը՝ «Մշակ» չունի այնքան բաժանորդներ, որ ծածկէ իր ծախսերը, մի մի պերճախօս ապացուցներ են «Մշակի» լետադիմութեան ու անկման և տնարտս լառաջաղիմականների ակներ ապիկարութեան:

Ներեցէք, ալդպէս չէր նազարեանցի ժամանակ,

Ադրպէս չէր և ոչ Գրիգոր Արծրունու ժամանակ:

Նազարեանցի «Հիւսիսակիալլը» կարդում էին ժամանակի հալ զարդացած դասակարգերը, Նրա կամ հետը կամ դյժն էին ժամանակի բարոր լարունի ուժերը ու մարդիկը, Ազ բան է, որ զարդացածներին թիւը քիչ էր:

Նազարեան Ստեփաննոս Արծրունի Գրիգոր գիտութեան պաշարով մարդիկ էին ու ընականաբար իրենց հասկացուների, իրենց հետ հաւասարների ընկերակցութիւնն ու ընդդիմութիւնները պիտի որոնէին, իրենց շրջանի պահանջի համեմատ՝ և սնունդի, և նիստ ու կացի պահանջ պիտի զգալին, Ազ կերպ և լինել չէր կարող, Նրանք չէին կարող ջուր ծեծել ոչ քամի արածացնել, ալդ արդէն ալսօրվալ խմալիկ առաջաղի-հականների գործն է:

Մի տասը տարի և Քալանթարի ու Լէօի «Մշակը» ակսօր արդէն դատարել է հալ զարդացած դասակարգի համար գորութիւն ունենալուց, զադարել է հասարակական կիզող խնդիրներ լարուցանելու ու արժանաւոր կերպով մշակելու կարողութիւնից, զադարել է մեր գործող դասակարգերի վրա աղդեցութիւն ու կշիռ ունենալուց և զարծել է միան անոր ալ-

դրութենից» սկսողների հետաքրքրութեան «հասարակ ժողովրդ-դիր պարզամտութեան առարկար»

Այսքան էլ ողորմելի լառաջադիմութիւն.

Այսքան էլ բնորոշ գնահատութիւն իրենց գործունէութեան ու արժանիքի,

Նև միթէ այլ տեսակ հետեանքներ կարող էին առաջացնել դրանց անվերջ հակողանքները, դրանց զինովացած ինքն սպաշտութիւնը, դրանց ընթան սերտած Աւալս համամարդ կայինաց զաղափարների անուան տակ գործ դրած ամենանեղ սիրտ եղաբատեցութիւնները, ծալրադուն աններողամիտ վերաբերմունքներն ու հալածանքները դէպի իրենց հակառակորդները, դէպի նրանց առ հօտարակ, որոնք իրենց փարախից չեն, որոնք իրենց նման մտածող չեն, իրենց թութակով ածող ու պարողներից չեն:

Եֆն, ցաւալի, շատ ցաւալի, որ ալսօր զարդացած հայ գասակարզը երես է զարձել մեր մամուլից (այս հարցին կը գառնանք մի այլ անգամ), ցաւալի է, որ ալսօր քիչ շատ կամք, խելք, գիրք ու հասկացողութիւն ունեցող հակերի աչքում կորցրել է հայ մամուլը իր նշանակութիւնը ու ամելի ցաւալին աբն է, որ ալսօրուակ «ալբուբենից» սկսողներն էլ վաղը մի փոքր որ առաջանան—զարգանան, պիտի ամելի զզուանքով շուր տան երեսները իրենց «փոքրկութիւնը» շահագործող առաջադիմականներից:

Այս ախազէս լինելով՝ տուժողը-կորչողը պիտի լինի հայութիւն, աշխարհօրէն շահողը նրանք, որոնք փոքրիկներին դակթակղեցնում են, որոնք իրենք իրենց փառաբանում են, որոնք եւրոպական քաղաքակրթութիւն ընս գլոտութիւն ասելով հասկանում են անսանձութիւն և տնական ինքնուրութիւը, մամուլ ասելով հասկանում են առատ կաթ տւող կով, ընթերցող ասելով հասկանում են իրենց կաթը սպառող մանուկ, Այս թշուառ առաջադիմութիւնը տեսնելով, մնում է մեզ անմահ նազարեանցի նման ասել.

«Ազգերնիս կը լառաջադիմ է կոր»:

ԽԱԴՐՈՒՆԻ

ԱՄԵՐԻԿԱՑԻ ԼԵՀԱՑԻՆԵՐԸ

Անցեալները «Նոր-Դարը» հաղորդել էր, թէ ամերիկացի մի խումը լեհացիներ ցանկալով առանձին, ազգալին անկախ

եկեղեցի հիմնել, դիմու ևն Ամերիկայի հարց եպիսկոպոսին և խնդրել, որ իրենց համար քահանաներ ձեռնադրէ և միջնորդէ Ազգիս Վեհափառ Հալբագետի առաջ, որպէս զի նրանց համար մի եպիսկոպոս ձեռնադրէ:

Ալումարա-ի անցեալ համարում ապուած էր արդ գրութեան թարգմանութիւնը, որով լինացիները դիմու էին Սարանեան սրբազնին: Անշուշտ շատ հետաքրքրական երեսի է լինացիների արդ վարիունքը պատմական էւոլյոցիալի տեսակետից և խրատական մեղ հարցու համար—մինչ մենք ովինչ զին շնոք տալիս մեր զարերով սրբագրծուած ազգալին ժողովրդական եկեղեցուն, ուրիշ ազգեր (մենակ լինացիները չեն արդ անողը) ամեն ճիզ թափում են մի հնար զանելու որ իրենց համար սեփական ազգալին եկեղեցի ստեղծեն, այնպէս, ինչպէս Անգլիան ստեղծեց (անգլիական) ինչպէս Ֆրանսիան քանիցս փարձեց ստեղծել (զալիքան) եկեղեցին.... Ինքն ըստ ինքեան արդին մեր ինքնասիրութեան կողմից էլ հետաքրքրութիւն է ներկայացնուած արդ ինչպի ապագալ ընթացքը: Իսկ մինչ արդ աւելորդ չէ մի քանի տեղեկութիւններ տալ Ասերիկայի լինացիների մասին:

Վեհացիները Ամերիկալ սկսել են զաղթել սկսած 1830 թուականից, բայց արդ զաղթականութիւնը մանաւանդ առանձին որժ ստացաւ: 1850 թ. լետու, երբ զանազան նաւազնացութեան ընկերութիւններ Ամերիկայի Տեխսա և ուրիշ նահանգների կալուածատէրերից վարձատրութիւն ստանալով առանձին հրաէրներ, ունկամններ սկսան տարածել զատարի տեղերի մասին, որոնք որպէս թէ համարեա թէ ձրիապէս բաժանում են ուղղուներին: Ամերիկալում շատ ազատ հողեր կային, բայց բանուորներ չկալին հողը մշակելու համար, Ունկամնների նպատակն էր մշակներ գրանչ և լրոպալի ամեն կողմից սկսան գունդ-դունդ գլւղացիներ, որոնց մի մասը զնում էր առ միշտ նոր հալրենիքում ընակութիւն հաստատելու նպատակով, իսկ միւս մասը՝ վերստին իւր հին հալրենիքը վերապառնալու լուսով: Ներկալում արդէն դրանց թիւը Ամերիկալում հասնում է մոտ 1¹/₂ մրլիսոնի:

Բնականաբար Ամերիկալում լինացիները աղատ էին ամեն տեսակ գործի էլ կաչելու, բայց մինչև օրս էլ նրանք զլսաւորապէս ամենահասարակ գործերով են զբազւում և հազիւ է պատահում, որ նրանց միջից փոքր ի շատէ չասենք բարձր, նոյն իսկ միջին կարգի պաշտօնի հասնողներ լինին թէ արհեստների և թէ առետուրի մէջ: Միննուն կերպով էլ նրանք համարեա թէ ոչ մի քաղաքական զեր չեն խաղում երկրի մէջ, ոչ մի նշանակութիւն չունին նաև քաղաքալին դործերի մէջ, թէպէտ և նրանց թիւը, օրինակ, Զիկազօք քաղաքում հասնում է 50,000-ի, Բուֆֆալում և Նիւ-էորկում — 40-ական հազարի և ալլու և արդ բանը բացատրում է նրանով, որ նրանց մէջ ոչ մի կապ չկալ, և եթէ դու միմեանց

ևսո մի որ և լիցէ լարաբերութիւն պահպանում են, ալդ էլ կրօնի շնորհիւ է միան։ Ամերիկայում նրանք 300-ից աւելի եկեղեցիներ ունին և ամեն տարի էլ նորերն են հասուցանում։ ուր որ մի երկու հարիւր լեհացի բնակութիւն հաստատեց, անշուշտ այն տեղ էլ եկեղեցի կկառուցուի՝ կողքին էլ ուսումնարան, բայց այդ ուսումնարանները չատ սահմանափակ, համարեա զուտ կրօնական ծրագիր ունին, և միան Զիկագօի կոլեջիան և Դեկտրուալի դպրանոցն է, որ միջնակարգ ուսումնարանների ծրագիր ունին։

Իսկ նրանց հոգեսր գործերի մասին գաղափար կարելի է կաղմել Barszezewski-ի «Polacy w Americe» գրքովից, «որի մէջ տեղեկութիւններ աալով լեհացոց գաղութների մասին Ամերիկայում, Նկարազրում է նաև նրանց հոգեսրականների դրութիւնը։

Ամերիկայի լեհական հոգեսրականութիւնը բոլորովին իւր կոչման բարձրութեան վրայ կանգնած չէ և իւր հոտի վրայ էլ ոչ մի ազդեցութիւն չունի, որովհետեւ նրա կաղմութեան մէջ մտնում են այնպիսի անձինք, որոնց նկուպալի եպիսկոպոսներն արձակած են իրենց պաշտօնից ¹⁾։ Իսկ Ամերիկայի կաթոլիկ եպիսկոպոսները, որ գլխաւորապէս գերմանացի կամ լուանդացի են լինում, չեն հասկանում լեհական հոտի հոգեսր կարիքները։ Քահանաների մէջ շարունակ վէճնը, գանցատներ են տեղի ունենում հարուստ ծովս ձեռք ընթելու համար, և ալդ բանը վատ ներգրոծութիւն ունի ծիսականների վրայ։ Նրբենին քահանալք փորձեր են անում եպիսկոպոսի իշխանութիւնից գուրս գալով անկախ իշխանութիւն հաստատել։ Պէտք է նկատել, որ Ամերիկայի Միացեալ Նահանգներում եկեղեցին սեփականութիւն է համարում այն եպիսկոպոսի, որի իշխանութիւն տակ որ գտնում է, ակսպիսով եկեղեցական կաթոլիկ իսկապէս կազմում են եպիսկոպոսի սեփականութիւնը, իսկ քահանալք բացարձակապէս կախումն եւնին եպիսկոպոսից։

Երբեմն պատահում է, որ ժողովրդի մի մասը դժո՞հ լինելով եպիսկոպոսի մի որ և լիցէ կարգադրութիւնից, բաժանում է և իրեն համար ջոկ եկեղեցի շինում և եպիսկոպոսի իշխանութիւնից բոլորովին անկախ զաւում։ միւնուն կիրապով վարում են նաև քահանացք։ Նրանցից մէկն, օրինակ, հայր Կողղովուկին, մինչև անգամ իրեն Զիկագօի անկախ եպիսկոպոս հրատարակեց՝ նախապէս Զուցերիալի հին կաթոլիկ եկեղեցու մի եպիսկոպոսից ձեռնադրուելուց լետոր։

¹⁾ Թիստ մեծ զգացութեամբ պէտք է միւրաբերում դէպի այդ դիսուլութիւնը, որ անկասկած կաթոլիկ հոգու արդինք է, մանաւանդ որ չէ լայտնուած, թէ ինչ պատճառով են այդ բահանակը իրենց պաշտօնից արձակուած։ Արդեօք այդ պատճառը հէնց այն բողոքող հոգին չէ, որը նրանց ստիպում է գնալ ազատ երկիր և ազատ եկեղեցի հիմնել, թ. 4.

Երկրորդ անկախ ևսլիսկոպոսութիւն հիմուղը եղել է Կամին նոկին Բուֆալում:

Արդէն սովն համառոտ տեղեկութիւններից էլ երեսում է, որ Ամերիկայում ինչպէս նաև ամեն մի լուսաւորեալ և ազատ երկրում կաթոլիկ եկեղեցին լուծում և կաթոլիկ ժողովուրդը, չանդուրժելով ալդ եկեղեցու բռնապետական ողուն, որը ամեն մի հաւատացեալի հոգին աշխատում է սեղմել չափաղանց սահմանափակ շրջանակի մէջ, աշխատում է զուրս զալ ճնշման տակից և փոքր ինչ ազատ չունչ քաշել:

Սակայն Սառածեան Մրբազանին դիմող կաթոլիկները ինչպէս երեսում է, աւելի ընդարձակ նսպատակ և գաղափար ունին, քան լոկ Հռոմի բռնակալութիւնից աղատուելը. Նրանք ուզում են հիմք դնել լեհական ազգային ժողովրդական եկեղեցու...: Բայց աջողութիւն կունենան թէ ոչ—ալդ ապագակի դործ է իհարկէ. լամենայն դէպս չենք կարող չցանկանալ իսրատէ աջողութիւն ալդ՝ ինքնուրունութեան զաղափարի դինուրներին:

Աւելացնենք ալս, որ լինացիններն Ամերիկայում ունեն բաւական թուով պարբերական թերթեր (40-ից աւելի), որոնց մի նշանաւոր մասը (18 հատ) հրատարակուում է Զիկազում: Առաջին թերթը հրատարակուել է Նիւ-Նորկում, 1863 թուին: Նրանք ունին նաև փոխադարձ օգնութեան մարմնամարզական, երաժշտական և ալլ ընկերութիւններ:

ՀԱՅՈՑ ՃԱՐԱԿԱՆՆԵՐԻ ՓԲԱՆՍԵՐԻՆ ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ

Մեր աշխատակից պ. Յարոն ձեռնարկել է Գրանսերէն թարգմանելու, արձակ ձևով, մեր Հայաստաննեալց ո. եկեղեցու մի քանի ընտիր շարականները, որ մտադիր է ժամանակին լու հանել առանձին հրատարակութեամբ՝ ֆրանսիացի ընթերցողին անհրաժեշտ ծանօթութիւններով: Ասպիսի աշխատութեանց հետաքրքիր և ումայի ընթերցողների համար առաջ ենք բերում պատեղ հետեւալ երեք տունը իբրև նմուշ:

Շարական սրբոց Վարդանանց

Նորահրաշ պատկաւոր և զօրագլուխ առաքինեաց. վառեցար զինու հոգ. ուն արիարար ընդդէմ մահու. Վարդանց քաջ նահատակ, որ վանեցեր զթշնամին. վարդագուն արեամբդ քոլ պատկեցեր զեկեղեցի:

Nouveau miraculeusement couronné, chef des vertueux combattants, tu t'es vaillamment armé des armes de l'Esprit contre la Mort, o toi, Vardan intrépide martyr, tu as mis en fuite l'ennemi, et, de ton sang, de couleur rose, tu as couronné l'Eglise!

Կանոն սրբոց Հոկտիսիմեանց

Անձինք նուիրեալք սիրոյն
Քրիստոսի՝ երկնաւոր նահատակք
և կուսանք իմաստունք. ի պար.
ծանս ձեր բարձրացեալ տօնք
մայր Սիօն, դատերօքն իւրովք:

Բարբառք երկնաւորք լցին
զերկիր. քանզի հոտ անուշաց
բուրեցալք ի Քրիստոս. ողջա-
կէղք բանաւորք և զոհք փրկու-
թեան, և որչք անարատք ըն-
ծալիալք Աւատուծոլ.

Ames sacrifiées à l'amour du
Christ, martyres des cieux et
vierges sages, c'est par votre
gloire que l'Eglise, s'exaltant, fê-
te avec ses filles votre mémoire!

Les paroles des cieux rem-
plirent la terre, car comme une
douce odeur des parfums vous
avez exhalé votre martyre de-
vant le Christ, vous holocaustes
spirituels et victimes de la ré-
demption, vous agneaux imma-
culés offerts à Lieu!

ՀԱՆԳ. Ա. ՂՈՒԿԱՍՍԵԱՆՑԻ ԿՑԱԿԸ:

Աւելորդ չենք համարում ընթերցողներին ծանօթացնել
նորոգ հանգուցեալ Ա. Ղուկասեանի կտակի գլխաւոր կէսերի
հետ, որ մենք քաղել ենք բուն իսկ կտակից, որ վաւերա-
ցրած է նոտարի ձեռքով 1901 թուի դեւատ. 19 ին.
Հանգուցեալը իւր կտակի կտակակատարներ նշանակել
է 1, իւր ամուսին ա. Աննա Բ. Ղուկասեանցին, 2 իւր եղբօր
որդի պ. Պողոս Բ. Ղուկասեանցին և 3, իւր աւերորդի պ.
Մշացական Յ. Խունունցին, որոնց և ինդրում է հետեւալ
կարգադրութիւններն անել.

1. Ա. Էջմիածնի հայոց նախաթոռ վանքին, Վաղարշապա-
տում, տայ 30.000 ռուբլի ախ պայմանով, որ դրամագլուխը
մեալ անձեռնմխելի, իսկ առկուսիքով ուսանին հալ լուսաւոր-
չեան դաւա նութեան զաւակներ, որոնք աւարտած կլինին
էջմիածնի հայոց հոգեսր ձեմարանը, իսկ սորա դուստիւն
չունեցած դէպֆում, հալ լուսաւորչականների որդիք, որոնք
կցանկանան նուիրել / բանց հոգեոր կոչման կովկասում, Տաճ-
կաստանում կամ Պարսկաստանում ախու, որ ալս թոշակա-
ւորները հոգեոր կոչումն ընդունելուց լետոյ ուղարկուին ար-
տասահման հայկական և աստուածաբանական գիտութիւնների
մէջ կատարելագործուելու համար, Թոշակաւոր պիտի ընդուն-
ուին միմիալն հալ լուսաւորչեան դաւանութեան անձինք,
որոնք կխոստանան ծառակել հալ եկեղեցուն և ժողովրդին: Այս
կարգադրութեան կատարումը լանձնում է ամենալն հայոց վեհ.
կաթուղիկոսին տնօրինութեան ս. Էջմիածնի ճեմարանի վար-

չութեան հետ, իսկ եթէ վերջինս գոլութիւն չունենալ, միայն վեհ. կաթողիկոսին:

2, Էջմիածնի հալոց նախաթռու վանքին 30,000 ռուբլի այն պայմանով, որ դրամագլուխը մնալ անձեռնմխելի, իսկ տոկոսիքով դաստիարակութին հայ լուսաւորչականների որդիք, միմիայն զանազան դիտութիւնների մէջ կատարելագործուելու համար. Այս կարգադրութեան կատարումը լանձնում է ամենալան հալոց վեհ. կաթուղիկոսի տնօրինութեան ո. Էջմիածնի հեմարանի վարչութեան հետ, ևթէ վերջինս գոլութիւն կունենալ:

3, Թիֆլիսի վանքի մաս եկեղեցու բակում իւր կառուցած եկեղեցական թանգարանին տալ 10,000 ռուբլի, որպէս զի դրամագլուխը մնա! անձեռնմխելի, իսկ տոկոսիքը գործ դրուի շարունակելու իւր հիմած դրական մրցանակը այն կանոններով, որ մշակել է թանգարանի վարչութիւնը և հաստատել ամենալան հալոց վեհ. կաթողիկոսը, Մըցանակը պիտի տրուի իւրաքանչիւր տարի ապրիլի 7 ին իւր կառուցած շինութեան մէջ Թիֆլիսի վանքի մասը եկեղեցու բակում. ևթէ այս թանգարանը որեւէ պատճառով դադարեցնէ իւր դոլութիւնը, մրցանակը շարունակում է վեհ. կաթողիկոսի տնօրինութեամբ:

4, Նոյն թանգարանին տալ 5000 ռուբլի այն պայմանով, որ դրամագլուխ տոկոսին գործ դրուի թանգարանի պահպանութեան համար: Թանգարանի զաղարման դէպքում դրամագլուխն անցնում է ամենալան հալոց կաթողիկոսի բարեհամեցողութեան:

5, Դալրէժի հայ ուսումնարաններին տալ 10,000 ռ. որպէս զի դրամագլուխ տոկոսիքով թոշակա.որներ պահուին ախտեղ իւր անոււան:

6, Ամենալան հալոց վեհ կաթողիկոսի տրամադրութեան լանձնել 5000 ռ.

7, ս. Երուսաղէմի հայ լուսաւորչեան վանքին 5000 ռ.

8, Վանքի մ. եկեղեցու թանգարանին 6000 ռ., որի տոկոսիքով իւրաքանչիւր տարի օժիտ տալ երեք հայլուսաւորչական խեղճ օրիորդներին:

9, Նոյն թանգարանին 4000 ռ., որի տոկոսիքը իւրաքանչիւր տարի ապրիլի 7 ին իւր վերակ հողեհանգիստ կատարելուց լետող բաժանել աղքատներին: Ինչպէս այս, նոյնպէս և 8 լոտ, գումարները, ևթէ թանգարանը գոլութիւն չունենալ, անցնում են Թիֆլիսի հալոց կոնսիստորիալին նոյն նպատակով:

10, Իւր ծխատէր Գիւտ ա. քահ. Աղանեանցին, հակական «Լումար» ամսագրի խմբադրն, տալ 6000 ռ., որ նա տոկոսը զործ դնէ իւր աշխատութեանց հրատարակութեան վերաբ:

11, Վանքի մ. եկեղեցու միաբանութեան 2000 ռուբլի, որի տոկոսիքը իւրաքանչիւր տարի ստանալով միաբանութիւնը ապրիլի 7 ին հողեհանգիստ կատարէ իւր գերեզմանի վերաբ:

12, իւր չքաւոր ազգականներին՝ լականէ լանուանէ մասնատրել է 20,000 ռուբլի. Եւ ալն.

ՄԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ

Ներկալումս ս. Էջմիածնի մի քանի սարկաւագներ ուսանում են Ռուսաստանի ալս և այն համալսարաններում, Դոցանից Ս. Պ. Բուրդի համալսարանի ուսանող Սմբատ սարկաւագին համալսարանի վարչութիւնը անցեալ ամառ ուղարկել էր Պարսկաստան զանազան հետազոտութիւններ կատարելու համար. Շնորհալի սարկաւագը վերադա ձաւ անցեալ նուեմբեր ամսին, տանելով իւր հետ մի քանի արկդ իւր ժողոված հնութիւններն ու նիւթերը և օգտուելով ալդ առաքելութիւնից՝ սարկաւագը կազմել է մանրամասն ցուցակ Պարսկաստանի մեր նշանաւոր վանքերի ձեռագրների. Ցուսանք, որ ալդ նիւթերը մօտիկ ապադարում հրատարակուած կտեսնենք և հասարակութեան սեպհականութիւն դարձած.

ԿԱՐՍԻ ՆՈՒԱՃՄԱՆ ՔԾԱՆՈՒԷԽԻՆԳԱՄԵԱԿԸ

Նոլեմբերի 6-ին քսանուհինդ տարի լրացաւ արն օրից երբ ուռուական լալթական զօրքը առաջնորդուած ըստ մեծի մասին հալ քաջարի զօրապետներով, մուտք դործեց տաճկական անառիկ հսմարուած Կարս բերդաքաղաքը.

Աղէքսանդր Աղաստարար կախըր ալ ևս չհանդուրժելով քրիստոնեանների հալածանքին Տաճկասոանում պատերազմ հրատարակեց Թուրքիալին. հարիւր հազարաւոր ուսուզինուրների թափուած արիւնով աղատութիւններ դարձան. Քանի քրիստոնեալ ազգեր և անկախ պետութիւններ դարձան. Սան-Ստէֆանապիլ դաշնաղրութետոմի, որի 16-րդ լոդուածը վերաբերում էր հալերին, խաղաղութիւնը վերականգնելուց լեռող ուռունները թողին էրզրումը. իսկ Բերլինի վեհաժողովում Սան-Ստէֆանապիլ դաշնաղրութեան 16-րդ լոդուածը փոփխութիւն կրելով՝ կազմեց վեհաժողովի 61-րդ լոդուածը, որ ցալմանիրագործելի թողեց Տաճիկ կառավարութիւնը.

Կարս քաղաքը մեծ շքով տօնեց տաճիկ կառավարութեան լուծը թօթափելու քաանեհինդամեակը և հիմք ձգեց մի արձանի, որ նուիրուած կլինի անմատչելի բերդաքաղաքի նսւածման լիշտավակին.

Նոյն օրը հալ հողմորականութիւնը հանդիսաւոր հոգեհանդիսակատարեց Վանաց մալր եկեղեցու զաւթում հողին շանձնուած վերջին ուսու տաճկական պատերազմի հերոսների գերեզմանների վրաք. Լոռու-Մելիքեանի, Տէր-Ղոկտսեանի,

Լաղարեանի, Շոկովնիկեանի մահարձանները մի անգամ հո-
ծածկուեցան դափնիներով և ներկալ սերնդին լիշեցրին իրենց
տակ ամփոփուած հերոսների անձնազո՞ն քաջազործութիւնները.

ԹԵՄԻՍ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Վրաստանի թեմի ռազմություն նորին բարձր սրբազնութիւն
Տ. Գէորգ արքեպիսկոպոս Սուրբնեանցը, որ 1901 թուի
օգոստոսին Աղջիս սրբազնազով քահանալապետի կողմից կո-
չուած էր մալր աթոռը Ա. Էջմիածին մի ալ ռառաւել կարսոր
պաշտօնի հրաւիրելու, նորին վեհափառութեան հաճութեամբ
և կոնդակով վերահաստատուելով իւր նախկին՝ թեմակալու-
թեան պաշտօնում, ամսու 24 ին ժամանեց քաղաքաւ,

Սրբազնին ընդառաջել էր մինչև Ալէքսանդրապոլ
կոնսիստորիալի նախանդամ տ. Արսէն վարդապետը, իսկ որ-
պէս հրաւիրակ գնացել էին մինչև ս. Էջմիածին՝ Թիֆլսի հալ
եկեղեցիների երեքփոխանների կողմից պ. պ. ճարու Նիկողայոս
Գրիգորեանց և Խաչակ Բուղդանեանց և հոգևորական զասի
կողմէց կոնսիստորիալի կարգադրութեամբ աւագ քահանաներ
տ. Ղառնդ Խարազեանց և տ. Գիւտ Աղանեանց, Վերջինու-
մինչև Անի կալարանը, բազմաթիւ և հոգևորականներ և աշ-
խարհականներ ընդառաջել էին Ալէքսանդրապոլ և Ղարաքի-
լիսա. ինչպէս նաև Թիֆլսի կալարանը, Վանքի մալր եկեղե-
զու դռանը նորին Բ. Սրբազնութեանը դիմաւորեց հոգմորա-
կան զասի եկեղեցական մափորվ ժողվրդի բազմութեան հետ,
Ընդունելութիւնը համակրական էր և բաւականին շքեղ:

ՍԱՆԱՀՆԻ ՎԱՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԴՈՒԹՈՒՆ.

«Առմալի» անցեալ համարներում լալտնել էինք, որ Սա-
նահնի հինաւուրց և նշանաւոր վանքը նորոգուեցաւ արդէն
կատարելապէս և նորա վանահալր տ. Գարեգին և պիտոպոս-
Սաթունեանը սկսել է մի քանի շինութիւններ կառուցանել
հիւրերի և ուխտաւորների համար. Ալֆմս մեղ հաղորդում են
հաստատ ազգիւրներից, որ սրբազնը լաջողել է Բագում հան-
գանակել 11,000 ռուբլու մի դումար, որի կէսը զանազան
անհատներից՝ ծեռնարկուած շինութիւնը լրացնելու, իսկ միւս
կէսը նուիրել է բարեպաշտ և. Սէրգէլեանցը երկաթուղու-
«աղատֆորմից» մինչև վանքը կանոնաւոր խճուղի շինելու հա-
մար ընդամենը 3 վերաս երկանութեամբ. Այս օրերս ճար-
արագապետ գնալով՝ գործը տրուել է կապալով և լունուարից
պիտի սկսուի խճուղու շինելը. Ցանկալի է, որ մեր միւս վան-
քերի վանահալրերն օրինակ առնեն սրբ. Սաթունեանից.

ՕՐԱՑՈՅՑ

Խմբագրութիւնս բաղտ ունեցաւ ստանալ նորին Սրբութիւն ազգիս ՎԵԿ. Հայրապետի կողմից, հայրապետական Դիւանի մի գրութեան հետ, էջմիածնատիպ օրացոլց իբրև նոր արուան չնորհաւորութիւն։

«ՀՈՒՄԱՆ» 1902 ԹՈՒԻՒՆ.

Խմբագրութիւնս սկսելով «Լումակ» երկամսեակի հրատարակութիւնը՝ խոստացել էր իւր ընթերցողներին տալ իւրաքանչիւր համարը 7-8 թերթից բաղկացած, որով մենք պարտաւոր էինք տալ տարեկան ընդամենը 1400—1500 երեսից մնաք, խրախուսաւած ամեն կողմից արտալայտուած համակրութեամբ՝ հնարաւորութիւն ունեցանք տալ մօտ 2000 երես, իսկ ինչ վերաբերում է «Լումակ» ի բովանդակութեան ալդ թողնում ենք դատելու մեր ընթերցողներին։

ՄԻ ՆՈՐ ՌՈՒՍԵՐԵՆ ՕՐԱԹԵՐԹ.

Մամուլի գլխաւոր վարչութեան կարգադրութեամբ «Տեղական» ռուս օրաթերթի խմբագիր հրատարակիչ հաստատւածէ ճարտարապետ պ. Նիկողալոս Գրիգորեանը, որին իրաւունք է տուած ընդարձակել ալդ թերթի ծրագիրը բոլոր սովորական բաժիններով։ Օրաթերթը լուս կտեսնի առաջիկալ լունուարի 1 ից։

